

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական գաղափարներից մեկը բոլոր առաջադեմ երկրների կողմից իրականացվող ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքին անցնելն է, որի կարևորագույն գրավականներից մեկը ջրային ռեսուրսների արդյունավետ և պատասխանատու օգտագործումն է: Հիմնվելով մեր երկրում ջրային ռեսուրսների առանձնահատկությունների, ինչպես նաև տվյալ տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման միտումների վրա, պետք է իրականացվի ջրային ռեսուրսների այնպիսի կառավարում, ինչը թույլ կտա հնարավորինս զերծ պահել դրանք հյուծման, աղտոտման և գերծանրաբեռնվածության սպառնալիքներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարիների ընթացքում նկատվում է ջրային ռեսուրսների նվազեցման միտում: Մասնավորապես՝ Արարատյան դաշտում ձկնաբուծության արագընթաց զարգացումն հանգեցրել է արտեզյան ստորերկրյա ջրային ռեսուրսների մակարդակի (ջրատար հորիզոններ) անկման՝ պայմանավորված Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի գերշահագործումով:

Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերը հանդիսանում են Կենտրոնական Հայաստանի խմելու ջրամատակարարման միակ հեռանկարային ջրաղբյուրը: Գոգավորությունը շրջափակող լեռնալանջերի նշանակալի ծախսով բոլոր բնաղբյուրները կապտաժավորված են և օգտագործվում են խմելու ջրամատակարարման համար:

Վերջին քսան տարիների ընթացքում, հատկապես ձկնաբուծական տնտեսությունների աճող թվաքանակի հետևանքով մեծապես տուժել է Արարատյան արտեզյան ավազանը: Մեծածավալ բարձրորակ արտեզյան ջրերի վատնումը պատճառ է դարձել արտեզյան ավազանի եզրագծի շուրջ 67%-ի չափով կրճատմանը: Համաձայն ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (այսուհետ՝ ԳԱՏՕ) ծրագրի կողմից իրականացված «Արարատյան դաշտի հորատանցքերի, բնական աղբյուրների և ձկնային տնտեսությունների գույքագրման և հաշվառման» արդյունքների՝ առավել մեծ ծավալի ջուր սպառում են ձկնաբուծական տնտեսությունները: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ ջրառի կայուն մակարդակը տարեկան կազմում է 1,094 մլրդ մ³, միայն 2016 թվականին արտեզյան ավազանից կատարվել է 1,6 մլրդ մ³ ջրառ (ավելին, քան ջրառի կայուն մակարդակն է), որի կեսն օգտագործվել է ձկնաբուծության ոլորտում: 2024 թվականի դրությամբ Արարատյան դաշտում ըստ ջրօգտագործման թույլտվությունների, հորատանցքերից տրված ջրառի ծավալը կազմում է տարեկան 1,09 մլրդ մ³, որից 853 մլն մ³ (ամբողջ ջրառի ծավալի 78.3 %-ը) ձկնաբուծական նպատակով:

Հաշվարկներն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ չնայած Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներին, շարունակում է ստորերկրյա ջրերի վիճակի վատթարացումը: Դիտարկումների համաձայն գոգավորության ճնշումային ջրերի գերշահագործման

արդյունքում (ռոռզման և, հատկապես, ձկնաբուծության նպատակով բազմաթիվ հորատանցքերի հորատում, նախկինում փականներով փակված հորատանցքերի վերաբացում, փակված ձկնաբուծական տնտեսությունների վերագործարկում) իջնում են ստորերկրյա ջրերի ճնշումներն ու մակարդակները: Ավելի քան երկու անգամ պակասել է շատրվանող գոտու մակերեսը, բազմաթիվ հորատանցքեր դադարել են շատրվանել: Անհետացել են Սև ջուր գետի ակունքներում գտնվող և Ջեյվա կոչվող աղբյուրները, որոնց գումարային ծախսը 1965 թվականին կազմում էր շուրջ 1400 լ/վ, իսկ Ակնա լիճը, որն իրենից ներկայացնում էր ճնշումային ջրերի բեռնաթափման արդյունք՝ ավելի քան 3000լ/վ ծախսով, ներկայումս դարձել է անհոսք լճակ: Նախկինում Հայկական ատոմային էլեկտրակայանի տեխնիկական հովացման նպատակով օգտագործվող ջրառը կատարվում էր վերը նշված աղբյուրներից, սակայն դրանց ցամաքելու պատճառով ներկայումս ջրառն իրականացվում է հորատանցքերով:

Դիտարկումները ցույց են տալիս, որ շարունակվում է ստորերկրյա ջրերի մակարդակների և ճնշումների իջեցումները, ինչը վկայում է, որ փաստացի ջրառը կատարվում է թույլատրելի սահմանից ավելի: Արմավիրի մարզի Ակնաշեն գյուղի վարչական տարածքի N 198 դիտակետում 2010-2011 թվականներին նկատվել է շատրվան, որն անհետացել է 2011 թվականի վերջերին: Մինչև 2013 թվականը ճնշումային ջրերի միջին տարեկան մակարդակն իջել է մինչև 1,1մ երկրի մակերևույթից ցածր: 2013-2016 թվականներին Արարատյան գոգավորության շատրվանող հորերի կարգաբերման, լուծարման և կոնսերվացման աշխատանքների արդյունքում վերոնշյալ հորատանցքում շատրվանն աննշան չափով վերականգնվել էր: 2018 թվականից ստորերկրյա ջրերի միջին տարեկան մակարդակը սկսել է իջնել 0,2մ-ով և դադարել է շատրվանել: 2020-2022 թվականներին ստորերկրյա ջրերի մակարդակն իջել է 1.57 մետրով (+0.17մ- (-1.40)մ):

Համանման պատկեր է նկատվում Արարատյան գոգավորության կենտրոնական մասում (Արարատի մարզ)՝ Սիս, Հայանիստ, Հովտաշատ, Դաշտավան բնակավայրերի NN78, 2005, 1523, 1526 դիտակետերում:

Ստորև աղյուսակով ներակայացվում է Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի ծառայության ազգային ցանցի մոնիթորինգի բաժնի կողմից Արարատյան արտեզյան ավազանի տարածքում գտնվող դիտակետերի 2018 և 2023 թվականների հունվար-հոկտեմբեր կատարված չափումների միջինացված տվյալների աղյուսակը.

ԱՂՅՈՒՍԱԿ

Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի ծառայության ազգային ցանցի մոնիթորինգի բաժնի կողմից
Արարատյան արտեզյան ավազանի տարածքում գտնվող դիտակետերի 2018 և 2023 թվականների
հունվար-հոկտեմբեր կատարված չափումների միջինացված տվյալների

ՀՀ	Դիտակետի տիպը և համարը	Դիտակետի գտնվելու վայրը	Դիտարկվող հիդրոերկրա- բանական պարա- մետրերը՝ Q(ծախս, լ/վ), H (ճնշում, մ), S (մակարդակ,մ)	2018 թվականի հունվար- հոկտեմբեր ամիսների միջին կշռային արժեքը	2023 թվականի հունվար- հոկտեմբեր ամիսների միջին կշռային արժեքը	Տարբե- րությունը
N.1	Հորատանցք 105	Արմավիրի մարզ գ.Եղեգնուտ	S	-2.32	-2.89	-0.57
N.2	Շատրվանող հորատանցք 108	Արմավիրի մարզ գ.Ակնաշեն	Q	0.75	-0.59	-1.34
N.3	Հորատանցք 152	Արմավիրի մարզ գ. Ապագա	S	-1.36	-3.1	-1.74
N.4	Հորատանցք 192	Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն	H	0.22	-5.07	-5.29
N.5	Հորատանցք 198	Արմավիրի մարզ գ.Ակնաշեն	H	0.32	-1.57	-1.89
N.6	Գրունտային ջրհոր 199	Արմավիրի մարզ գ.Ակնաշեն	S	-2.74	-3.16	-0.42
N.7	Շատրվանող	Արմավիրի մարզ գ.Գայ	Q	0.98	0.5	-0.48

	հորատանցք 1521					
N.8	Հորատանցք 1533	Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն	S	-1.51	-2.12	-0.61
N.9	Հորատանցք 1537	Արմավիրի մարզ գ.Արագափ	S	-2.07	-2.75	-0.68
N.10	Հորատանցք 1818	Արմավիրի մարզ գ. Ապագա	S	-2.15	-3.59	-1.44
N.11	Շատրվանոլ հորատանցք 2001	Արմավիրի մարզ գ.Ակնաշեն	Q	1.01	0.3	-0.71
N.12	Շատրվանոլ հորատանցք 2002	Արմավիրի մարզ գ.Տարոնիկ (Մեծամորի թանգ)	Q	0.98	0.05	-0.93
N.13	Հորատանցք 2018	Արմավիրի մարզ գ.Տարոնիկ Սև ջրի ակուքներ	S	-1.16	-2.61	-1.45
N.14	Գրունտային ջրհոր 2020	Արմավիրի մարզ գ.Ապագա	S	-1.19	-1.7	-0.51
N.15	Շատրվանոլ հորատանցք 2021	Արմավիրի մարզ գ.Ջրառատ	Q	6.99	3.92	-3.07
N.16	Գրունտային ջրհոր 2022	Արմավիրի մարզ գ. Լուսազյուղ	S	-2.52	-2.76	-0.24
N.17	Հորատանցք 2024	Արմավիրի մարզ գ.Բամբակաշատ	S	-17.75	-19.31	-1.56

N.18	Հորատանցք 2025	Արմավիրի մարզ գ.Հայկական	S	-11.84	-13.3	-1.46
N.19	Հորատանցք 2026	Արմավիրի մարզ գ.Տարոնիկ	S	-3.71	-5.04	-1.33
N.20	Շատրվանոլ հորատանցք 2055	Արմավիրի մարզ գ.Ակնաշեն ԵՄ	H	1.20	0.59	-0.61
N.21	Հորատանցք 2057	Արմավիրի մարզ գ.Ապագա	S	-0.25	-1.5	-1.25
N.22	Հորատանցք 78	Արարատի մարզ գ.Սիս	S	-0.20	-0.88	-0.68
N.23	Շատրվանոլ հորատանցք 1519	Արարատի մարզ ք.Մասիս	Q	4.82	5.28	0.46
N.24	Շատրվանոլ հորատանցք 1523	Արարատի մարզ գ.Հովտաշատ	Q	7.27	4.62	-2.65
N.25	Շատրվանոլ հորատանցք 1526	Արարատի մարզ գ.Դաշտավան	Q	6.49	3.72	-2.77
N.26	Շատրվանոլ հորատանցք 1535	Արարատի մարզ գ.Սիս	Q	1.97	1.7	-0.27
N.27	Շատրվանոլ հորատանցք 1536	Արարատի մարզ գ.Սիս	Q	1.16	1.06	-0.10
N.28	Շատրվանոլ հորատանցք 2003	Արարատի մարզ գ.Սիս	Q	4.10	3.44	-0.66
N.29	Հորատանցք 2004	Արարատի մարզ գ.Ջրահովիտ	S	-0.97	-1.31	-0.34

N.30	Հորատանցք 2005	Արարատի մարզ գ. Հայանիստ	S	-1.71	-2.54	-0.83
N.31	Շատրվանող հորատանցք 2007	Արարատի մարզ գ.Ջրահովիտ	Q	1.12	1.06	-0.06
N.32	Շատրվանող հորատանցք 2008	Արարատի մարզ գ.Հովտաշեն	Q	0.63	0.12	-0.51
N.33	Գրունտային ջրհոր 2023	Արմավիրի մարզ գ. Խորոնք	S	-6.18	-7.39	-1.21
N.34	Շատրվանող հորատանցք 2053	Արարատի մարզ գ.Հովտաշեն	Q	1.86	0.77	-1.09
N.35	Հորատանցք 2056	Արմավիրի մարզ գ.Գրիբոյեդով	S	-2.11	-2.61	-0.50
N.36	Գրունտային ջրհոր 2006	Արարատի մարզ ք.Վեդի	S	-7.92	-10.62	-2.70
N.37	Հորատանցք 2052	Արարատի մարզ Մրգավետ	S	-2.37	-3.23	-0.86
N.38	Շատրվանող հորատանցք 2062	Արարատի մարզ ք.Արտաշատ (6- րդ զոր. մոտ)	Q	0.23	0.06	-0.17
N.39	Շատրվանող հորատանցք 2063	Արարատի մարզ գ.Դալար	Q	0.60	0.23	-0.37
N.40	Հորատանցք 2064	Արարատի մարզ ք.Արտաշատ (Մարտի հողամաս)	S	-2.75	-3.59	-0.84
N.41	Հորատանցք 2065	Արարատի մարզ գ.Եղեգնական	S	-5.23	-5.54	-0.31

N.42	Շատրվանող հորատանցք 2067	Արարատի մարզ գ.Սուրենավան	Q	0.87	1.1	0.23
N.43	Հորատանցք 2069	Արարատի մարզ ք.Արտաշատ (Նորվզլուի աղբ մոտ)	S	-2.70	-3.68	-0.98
N.44	Գրունտային ջրհոր 2072	Արարատի մարզ գ.Դալար	S	-2.95	-3.27	-0.32
N.45	Գրունտային ջրհոր 2073	Արարատի մարզ ք.Արտաշատ (Խաչիկի հողամաս)	S	-2.23	-2.4	-0.17
N.46	Հորատանցք 2074	Արարատի մարզ գ.Լուսառատ	S	-10.17	-9.77	0.40
N.47	Գրունտային ջրհոր 2075	Արարատի մարզ գ.Արմաշ	S	-6.89	-6.75	0.14
N.48	Հորատանցք 2076	Արարատի մարզ գ.Արարատ	S	-9.67	-9.73	-0.06

ԱԱԱ-ի ստորերկրյա ջրային ռեսուրսները հիմնականում ձևավորվում են II ճնշումային հորիզոնի բեռնաթափման շնորհիվ, հետևաբար այդ հորիզոնի ջրերի որակական և քանակական փոփոխությունները պայմանավորում են վերը գտնվող ջրատար երկու հորիզոնների համապատասխան փոփոխությունները: Այդ իսկ պատճառով II ճնշումային հորիզոնում կատարվող փոփոխություններն ազդում են Արարատյան գոգավորության ստորերկրյա ջրատար բոլոր հորիզոնների վրա: ԱԱԱ տարբեր տեղամասերում II հորիզոնը բնորոշվում է տեղադրման տարբեր խորություններով, հիդրոդինամիկ պարամետրերով և ջրերի որակով: Կախված ԱԱԱ-ի երկրաբանական ստրուկտուրային և տեկտոնական կառուցվածքից, նկարագրվող հորիզոնում տարածված են մինչև 1գ/լ քաղցրահամ և 13գ/լ թույլ աղահամ ստորերկրյա ջրեր: Խմելու ջրամատակարարման համար խիստ անհրաժեշտ քաղցրահամ (մինչև 1 գ/լ) ջրերը տարածված են Մեծամոր (Սևջուր) գետի աջափնյա և Մեծամոր-Հրազդան միջգետային տարածքում: Այստեղ ճնշումային ջրերը շատրվանում են երկրի մակերևույթից բարձր և հանդիսանում են տնտեսապես շահավետ տեղամասեր բարձրորակ ստորերկրյա ջրերի ստացման համար: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի զբաղեցրած տարածքը ԱԱԱ սահմաններում հյուսիս-արևմուտքից (Կեսարիա, Իսանջյան, Մյասնիկյան բնակավայրերի կողմից),

հյուսիսից (Մայիսյան, Եղեգնուտ) և արևելքից (Մարմարաշեն, Մխչյան, Դմիտրով բնակավայրերի կողմից) շրջափակված են թույլ աղահամ (13 գ/լ) հանքայնացման ստորերկրյա ջրերով, որոնք օգտագործվել և օգտագործվում են ոռոգման և այլ տնտեսական նպատակներով: Քաղցրահամ գոտու ճնշումային ջրերի մակարդակի իջեցման պատճառով ավազանի հյուսիս-արևմտյան մասի թույլ աղահամ ջրերը սկսել են կուտակվել այդ գոտում, որի պատճառով բարձրացել է ջրերի հանքայնացումը և կոշտությունը: Նշված երևույթներից խուսափելու համար անհրաժեշտ է կենտրոնական քաղաքահամ ջրերի տարածման գոտին խստիվ պահպանել և վերականգնել՝ կիրառելով կտրուկ և հրատապ միջոցներ, ընդհուպ՝ որոշ համայնքներում արգելելով ձկնաբուծությունը, իսկ ոռոգման համար օգտագործելով հիմնականում մակերևութային հոսքը:

Ինչպես արդեն վերը նշվեց, հատկանշական է, որ Արարատյան գոգավորության ստորերկրյա ջրերի քանակական փոփոխություններն հանգեցնում են որակական փոփոխությունների՝ ճնշումային ջրերի մակարդակի իջեցումներն ուղեկցվում են դրանց ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության բարձրացմամբ: Համաձայն «Հիդրոոգերնութաբանության և մոնիտորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կենտրոնական լաբորատորիայի անալիզի տվյալների՝ գոգավորության կենտրոնական մասում (N1523) ընդհանուր հանքայնացումը 2017-2021թ բարձրացել է 673մգ/լ-ից 850մգ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 6,16 մգ,համ/լ-ից 8,59 մգ,համ/լ: Համանման երևույթներ են նկատվում Արտաշատ քաղաքի վարչական տարածքի N2069 դիտակետում: Այստեղ ընդհանուր հանքայնացումը 730մգ/լ-ից բարձրացել է 1154մգ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 6,55 մգ,համ/լ-ից 13.93 մգ,համ/լ:

Վերոնշյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պայմանավորված բնակլիմայական պայմաններով և մարդու անհաշվենկապ ու անխնա գործունեությամբ Արարատյան արտեզյան ավազանում տեղի է ունենում ստորերկրյա ջրերի հյուծում (սպառում, աղտոտում), ինչը չափ կարճ ժամանակահատվածում կբերի համընդհանուր բնապահպանական և սոցիալ-տնտեսական աղետի:

Առկա խնդիրների լուծման նպատակով 2022 թվականին Ջրային օրենսգրքով սահմանվեցին մի շարք կարգավորումներ, որոնցից մեկն էլ հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում գործունեությունը փակ շրջանառու համակարգով իրականացնելու պարտադիր պահանջն էր: Հաշվի առնելով հիդրոերկրաբանների կողմից իրականացված ուսումնասիրությունները՝ առ այն, որ ստորերկրյա ավազանից ջրառի ծավալների 40% կրճատման պարագայում կգրանցվի ստորերկրյա ավազանի մակարդակի դրական տեղաշարժ, Ջրային օրենսգրքի 1-ին հոդվածով սահմանվեց *հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ* հասկացություն, համաձայն որի՝ դա ջրախնայող համակարգ է, որը կապահովի ձկնաբուծարանի ելքային ջրերի առնվազն 40 տոկոսի մաքրումից հետո կրկին օգտագործումը նույն ձկնաբուծարանի նույն ավազաններում՝ հորատանցքից իրականացնելով ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրառի ծավալի առավելագույնը 60 տոկոսի չափով ջրառ և ապահովելով ձկնաբուծարանի մուտքային ջրերի առնվազն 40 տոկոս ջրախնայողություն: Ձկնաբուծական տնտեսություններում փակ շրջանառու համակարգի ներդնման դեպքում տարեկան կխնայվեր մոտ 341 մլն մ³ ջրաքանակ: Սույն տեխնոլոգիան, անշուշտ, միջազգայնորեն ընդունված լավագույն ջրախնայող տեխնոլոգիաներից է, սակայն նշված համակարգի ներդնման գործընթացը բախվեց ձկնաբուծական գործունեություն իրականացնող

տնտեսվարողների դիմադրությանը, որոնց ջանքերը, շրջանառու համակարգի ներդրման ապահովման փոխարեն, ուղղված են լրացուցիչ ֆինանսական ծախսերից խուսափելուն և խմելու ջրի սպառման ու հյուծման հաշվին առավելագույն շահույթ հետապնդելուն: Ներկայումս մի խումբ ձկնաբույծների դիմումի հիման վրա վարչական դատարանը կասեցրել է հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը, ինչի հետևանքով շրջակա միջավայրի նախարարության կողմից նախաձեռնված Արարատյան արտեզյան ավազանի աղետալի վիճակի բարելավմանն ուղղված համալիր գործողությունների ամբողջական իրականացումը մասնակի խաթարվել է և անհրաժեշտություն է առաջացել սահմանել ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման այլընտրանքային, առավել կիրառելի տարբերակ՝ որպես արդյունավետ կառավարման գործիք ճշգրիտ բաշխելով օգտագործելի ջրային ռեսուրսները, հաշվի առնելով ձևավորվող ջրառաջարկը և փաստացի ջրապահանջարկը, ինչպես նաև ընդհանուր առաջարկի և պահանջարկի գնահատումից ստացված արդյունքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխման գերակա ուղղությունները, իսկ հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգի ներդրումն իրականացնել կամավորության սկզբունքով, ինչին ուղղված կարող են կիրառվել խթանող մեխանիզմներ: Մասնավորապես՝ ներկայումս ձկնաբուծական նպատակով ջրօգտագործման թույլտվությունները տրամադրվում են նվազագույն ժամկետով (1.5 տարով), և որպես խթանող հանգամանք շրջանառու համակարգի ներդրման դեպքում կարող են տրամադրվել առավել երկարաժամկետ ջրօգտագործման թույլտվություններ:

Ջրօգտագործման թույլտվությունները ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ապահովող հիմնական իրավական գործիքն են: Հենց այդ իրավասահմանող փաստաթուղթն է օրենքով նախատեսված պահանջները հասցեագրում կոնկրետ ջրօգտագործողին՝ նրա համար ստեղծելով իրավունքների և պարտականությունների հստակ շրջանակ: Այդ իսկ պատճառով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացը պետք է լինի ճկուն, վերահսկելի, կառավարելի և թույլտվություն տրամադրող լիազոր մարմնին հնարավորություններ ընձեռի ժամանակ առ ժամանակ վերանայելու նախկինում տրված ջրօգտագործման թույլտվությունները՝ բնակլիմայական, սոցիալ-տնտեսական նոր պայմաններին և այդ պայմանների փոփոխության արդյունքում ձևավորված ջրառաջարկին համապատասխան:

Ուստի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանության համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ ձևավորվող ջրառաջարկի և փաստացի ջրապահանջարկի վերաբերյալ՝ կառավարումն իրականացնելով ջրավազանային տարածքների կառավարման պլաններին համապատասխան: Ջրառաջարկը ձևավորվում է հիմնականում հիմք ընդունելով հիդրոգերևութաբանական ցուցանիշները՝ դրան գումարելով փաստացի ջրօգտագործման տվյալները: Դա անհրաժեշտ է, որպեսզի իրականացվի ջրային ռեսուրսի հավասարաչափ բաշխում՝ ըստ գերակայությունների և տնտեսական ոլորտների՝ ապահովելով ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը:

Համաձայն Ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության առաջնահերթ սկզբունքներն են՝ ներկա և ապագա սերունդների հիմնական կենսական կարիքների բավարարումը, ազգային ջրային պաշարի ծավալների պահպանումը և ավելացումը, իսկ համաձայն **«Ջրի ազգային քաղաքականության**

հիմնադրույթների մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ ջրային ռեսուրսների պահպանության և կայուն կառավարման նպատակով ընդհանուր առաջարկի պահանջարկի գնահատումից ստացված արդյունքների հիման վրա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև ըստ առաջնահերթության իրականացվում է հետևյալ գերակա ուղղություններով՝ ըստ հերթականության.

1) ազգային ջրային պաշար՝ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանում.

2) ռազմավարական ջրային պաշար՝ արտակարգ իրավիճակների պայմաններում (երաշտ, էկոլոգիական աղետներ, էներգետիկ ճգնաժամ և այլն) մարդկանց հիմնական կարիքների բավարարման և ջրային էկոհամակարգերի պահպանման ապահովման համար ջրային ռեսուրսների պահպանում և օգտագործում.

3) ավանդական՝ ջրահոսքի հունի սահմաններում պատմական, ոչ արդյունահանման նպատակով ջրերի օգտագործում.

4) ջրային ռեսուրսների օգտագործում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պայմանագրերի համաձայն.

5) կենցաղային՝ մարդկանց կուլտուր-կենցաղային ջրապահանջի կարիքները բավարարելու համար ջրօգտագործում.

6) գյուղատնտեսական՝ ոռոգման, արոտավայրերի ջրարբիացման, անասնապահության և այլ ոչ արդյունաբերական ջրապահանջի կարիքները բավարարելու համար.

7) էներգետիկ՝ էներգիայի արտադրության ջրապահանջի կարիքները բավարարելու համար.

8) արդյունաբերական՝ ջուր արտադրական գործընթացներում.

9) ձկնաբուծական նպատակով ջրօգտագործում.

10) ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործում՝ ջուր՝ մարզական, սիրողական ձկնորսության, լողի, նավարկության և գեղագիտական վայելքի համար.

11) հակաերաշտային միջոցառումներ՝ երաշտներից վնասները նվազագույնի հասցնելու համար:

Ինչպես տեսնում ենք վերը նշված իրավակարգավորումից՝ առաջնահերթությունը տրվում է ազգային ջրային պաշարի՝ բնակչության հիմնական կարիքները բավարարելու, ջրի անբավարարության հետևանքով հիվանդությունները նվազեցնելու ու կանխարգելելու և ջրային էկոհամակարգերը պահպանելու համար անհրաժեշտ քանակի և որակի վերականգնվող ջրային ռեսուրսների պահպանմանը, իսկ խմելու-կենցաղային և ոռոգման նպատակներով ջրային ռեսուրսների օգտագործումը (5-րդ և 6-րդ կետեր) գերակա է ձկնաբուծության նպատակով ջրօգտագործման նկատմամբ (9-րդ կետ): Ընդ որում, ձկնաբուծությունը, լինելով 9-րդ գերակա ուղղությունը և զիջելով խմելու-կենցաղային, ոռոգման և արդյունաբերական նպատակներով ջրօգտագործման գերակայություններին, Արարատյան արտեզյան ավազանում տարեկան իրականացնում է 853 մլն մ³ ջրառ, ինչը կազմում է ջրօգտագործման թույլտվություններով տրամադրված ամբողջ ջրառի ծավալի 78.3 %-ը:

ԳԱՏՕ ծրագրի շրջանակներում առկա տվյալների օգտագործմամբ, միջազգայնորեն ընդունված մեթոդաբանությունով և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառությամբ հաշվարկվել են Արարատյան դաշտի

ստորերկրյա ջրավազանի ստորերկրյա ջրերի բնական պաշարների, 2016 թվականի դրությամբ ջրավազանը սնող բնական ռեսուրսների և ընդհանուր շահագործական պաշարի արժեքները: Արարատյան դաշտի 2016 թվականի ջրատնտեսական հաշվեկշռի տարրերի հաշվարկային արժեքները ցույց են տալիս, որ մարդու գործունեության հետևանքով Արարատյան արտեզյան ավազանում առկա է ջրի զգալի դեֆիցիտ: Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի ընդհանուր շահագործական պաշարի արժեքը 2016 թվականի դրությամբ ավելի քան 15%-ով պակաս է 1984 թվականի Պաշարների պետական կոմիտեի կողմից հաստատված և 2015 թվականին «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքով սահմանված ստորերկրյա ջրառի տարեկան թույլատրելի 1,1 մլրդ. մ³ ծավալից և **կազմում է մոտավորապես 926 մլն. մ³:**

Ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի համաձայն՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա, որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է: Քանի որ չկար սահմանված ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածության հաշվարկի մեթոդաբանություն, հաշվարկի համար ցուցաբերվել է հետևյալ մոտեցումը՝ գետերի վրա փոքր հիդրոէլեկտրակայաններով ծանրաբեռնվածությունը հաշվարկվել է փոքր հիդրոէլեկտրակայանների դերիվացիայի գումարային երկարության և գետի երկարության հարաբերությամբ՝ արտահայտված տոկոսներով, և որպես ծանրաբեռնվածության ռիսկային շեմ ընտրվել է միջին ծանրաբեռնվածությունը: Որոշումը կայացվել է հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում արդեն իսկ առկա հիդրոէլեկտրակայանների առաջացրած բնապահպանական խնդիրները և որպես խթանված ուղղություն՝ հիդրոէներգետիկայի սրընթաց զարգացումը: Ներկայումս իրականացված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել մշակել մեթոդաբանություն՝ հիմքում դնելով ջրօգտագործման ուղղակի և գումարային ազդեցությունը ջրային ռեսուրսի վրա:

Համաձայն Ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի՝ ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի գնահատման փուլում ջրօգտագործման թույլտվություն տալու որոշումը կայացնելիս Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից կիրառվող չափանիշներից են նախատեսվող ջրօգտագործման ուղղակի և գումարային ազդեցություններն ազգային ջրային պաշարի և ջրային ռեսուրսների որակի և քանակի վրա, և հայցվող ջրօգտագործման թույլտվության հնարավոր ազդեցությունն է գործող ջրօգտագործման թույլտվություն ունեցողների իրավունքների վրա: Իսկ համաձայն 30.1-րդ հեղվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ հայտը մերժվում է, եթե ջրային պաշարները բավարար չեն ջրօգտագործման թույլտվություն տալու համար, կամ պահանջվող ջրօգտագործման թույլտվությունը չի բավարարում ջրի ազգային պաշարի պահպանման պահանջները կամ ջրերի ստանդարտները, այդ թվում՝ ջրի որակի նորմերը: Ուստի, եթե ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածությունը գերազանցում է միջին շեմը, այն դառնում է ռիսկային ազգային ջրային պաշարի, ջրային ռեսուրսների որակի և քանակի պահպանության տեսանկյունից:

Ի կատարումն փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ 2024 թվականի մայիսի 27-ին կայացած հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման վերաբերյալ նիստի N ՓՎ/55 արձանագրության 3.1.1 կետի և հետագայում նրա մոտ կայացած խորհրդակցությունների ժամանակ

ներկայացված բանավոր հանձնարարականների՝ կապված ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով ստորերկրյա ջրերի բաշխման մեխանիզմների սահմանման, ՇՄԱԳ փորձաքննության եզրակացության արդյունքներով պայմանավորված ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման կամ հայտերի մերժման հետ, ինչպես նաև հաշվի առնելով դերիվացիոն խողովակներով ծանրաբեռնվածության հաշվարկի ճշգրտման և ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածության հաշվարկը միջազգային փորձին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը, համապատասխան փոփոխություններ են նախատեսվել ՀՀ ջրային օրենսգրքում և «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով՝

- «հասարակայնության ծանուցում» հասկացության «, որը տպագրվում է առնվազն 1000 տպաքանակ ունեցող տպագիր միջոցներում» բառերը հանվել են՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգի պահանջների համաձայն,

- «հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգ» հասկացությունը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված հասկացությանը,

- Օրենսգրքի 10-րդ հոդվածի 6-րդ կետը խմբագրվել է՝ հաշվի առնելով, որ ջրօգտագործման թույլտվությամբ արդեն իսկ սահմանվում և հաստատվում են ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի որակական և քանակական չափաքանակները, դրանց առանձին հաստատման անհրաժեշտությունը բացակայում է,

- Օրենսգրքի 10-րդ հոդվածի 11-րդ կետից հանվել են «ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև,» բառերը, հաշվի առնելով, որ վերջիններս կազմում են ջրային համակարգերի մաս, նույն փոփոխությունը կատարվել է նաև Օրենսգրքի 12-րդ հոդվածում,

- ամբողջականացվել են ազատ ջրօգտագործման դեպքերը՝ համաձայն որի հակահեղեղային միջոցառումների իրականացումը ևս կհամարվի ազատ ջրօգտագործում,

- ջրօգտագործման թույլտվության վավերապայմաններից հանվել է Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից կնքված լինելու պահանջը, հաշվի առնելով, որ ջրօգտագործման թույլտվության հայտերի ընդունման թվային հարթակը գործարկված է, և համաձայն Կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 740-Ն որոշման՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվելու է էլեկտրոնային եղանակով, իսկ ձևաթղթի էլեկտրոնային կնքման հնարավորություն առկա չէ,

- Օրենսգրքի 30.1-րդ հոդվածով ամրագրվել է, որ ջրօգտագործման թույլտվության հայտերը մերժվում են, եթե օրենքով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա լինելու դեպքում առկա չէ

շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, եթե ջրային ռեսուրսի ծանրաբեռնվածությունը գերազանցում է միջին ծանրաբեռնվածության աստիճանը, ինչպես նաև իրավական հիմք է նախատեսվել ջրային ռեսուրսների վրա ծանրաբեռնվածության աստիճանի որոշման մեթոդաբանության մշակման համար,

- Օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրվել է, որ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ժամկետի երկարաձգման դեպքում ջրօգտագործման թույլտվությունը երկարաձգվում է օրենսգրքով սահմանված կարգով,

- Օրենսգրքի 37-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի կարգով կսահմանվեն նաև էկոլոգիական թողքի հաշվառման դեպքերը,

- Օրենսգրքի 37.1-ին հոդվածը լրացվել է նոր 17-րդ մասով, որով հստակեցվել է Արարատյան դաշտի՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի սահմանած Արարատի և Արմավիրի մարզերի համայնքներում Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների բաշխումը ջրօգտագործողների միջև՝ ըստ ջրօգտագործման գերակա ուղղությունների և չափաքանակների, ընդ որում, սահմանված ջրօգտագործման չափաքանակների հաշվարկն իրականացվել է գործող ջրօգտագործման թույլտվությունների և շահագրգիռ մարմինների կողմից՝ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում խմելու-կենցաղային, գյուղատնտեսական, արդյունաբերական, ձկնաբուծական նպատակներով անհրաժեշտ ջրի պահանջարկի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Վերջիններիս համաձայն՝

Խմելու-կենցաղային –110 մլն.մ³/տարի = 12%

Գյուղատնտեսական –284 մլն.մ³/տարի = 30,9%

Արդյունաբերական –20 մլն.մ³/տարի = 2%

Ձկնաբուծական – 512 մլն.մ³/տարի = 55%

Ռեկրեացիոն և բնապահպանական – 0.1%

- Օրենսգրքի 37.3-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, համաձայն որի ստորերկրյա քաղցրահամ ջրերը սպառումից պահպանելու նպատակով պետք է խթանել հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում շրջանառու համակարգով գործունեության իրականացումը:

- Օրենսգրքի 121-րդ հոդվածի 6-րդ մասի 9-րդ կետն ուժը կորցրած է ճանաչվել՝ հաշվի առնելով, որ սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանված են Կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշմամբ և նոր կարգ մշակելու անհրաժեշտություն չկա:

«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվել է Արարատյան դաշտի վերականգնվող ստորերկրյա ջրային ռեսուրսների ծավալը նվազեցնել՝ «1.1 մլրդ մ³/տարի» բառերը փոխարինել «926 մլն մ³/տարի» բառերով՝ հաշվի առնելով իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները, ինչպես նաև կլիմայական փոփոխությունները և Արարատյան արտեզյան ավազանի ներկա վիճակը:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագծերը մշակվել է շրջակա միջավայրի նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

«Ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունումը հետամուտ է ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանմանը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարմանը, ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանը, ինչպես նաև Ջրային օրենսգրքի խնդիրների լուծման ապահովմանը: «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ ևս ակնկալվում է ապահովել ստորերկրյա ջրային պաշարների արդյունավետ կառավարումը, նպաստել ստորերկրյա արտեզյան ավազանի վերականգնմանը:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերի մշակումը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի մասին» N 1363-Ա որոշմամբ հաստատված Հավելվածի «4.10 Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնի միջոցառումներից: Նախագծերի ընդունումը հետամուտ է ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծման միջոցով ազգային ջրային պաշարի պահպանմանը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով անհրաժեշտ քանակի և որակի ջրով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարմանը, ստորերկրյա ջրային մարմինների կարգավիճակի վատթարացման կանխմանը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովմանը: